THE ISSUES OF SERVICMEN DISCIPLINE AND ADAPTACION

Nadoyan A. A. (Yerevan State University, Yerevan, Armenia)
Minasyan G. H. (Armenian State Pedagogical University, Yerevan, Armenia)
a.nadoyan@mail.ru, gayane-minasyan-1994@mail.ru
Ներկայացման ամս. 27.07.2021
Գրախոսման ամս. 10.08.2021
Տպագրության ընդունման ամս. 18.08.2021

The article introduces the requirements of RA Armed Forces presented to servicemen. Discipline is the strict and mandatory maintenance of rules regulated by laws and military orders and set by the commanders. The purpose of the research is to study military discipline, the causes and effects of disorder as well as its results, since it is based on the awareness of military duty and personal responsibility of servicemen. The objectives of our planned continuous research are to observe the approaches to the issue under discussion in scholarly literature, to investigate the peculiarities of discipline and disorder among the examined servicemen, their ways of expression as well as causes and effects. The topicality of the issue is determined by the importance of the discipline of servicemen and accomplishment of the objectives mentioned above. The hypothesis of the research is that the more flexible is the adaptability of the serviceman during the military service, the more effective he is in complying with the requirements and regulations of the military service. The research has been carried out among 200 military servicemen. To investigate this issue the corresponding psychological assessments methods have been applied: test method, psychological conversation, observation and case study. u

Keywords*: serviceman, discipline, disciplinary penalty, encouragement, adaptation.*

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2022.5.1.092

Լատիներեն կարգապահություն (անգլ.՝ disciplina) բառը նշանակում է խիստ կարգուկանոն: «Կարգապահությունը բոլոր զինծառայողների կողմից օրենքներով, զինվորական հրամաններով և հրամանատարների կողմից հաստատված կարգուկանոնի խիստ և հատուկ պահպանումն է» [5, 167]: Ներկայումս կարգապահություն ասելով հասկանում են համակարգված ուսուցում, վարժություններ, մտավոր, բարոյական և ֆիզիկական ընդունակությունների զարգացում և դրանց վրա հսկելու ընդունակություն, ինչպես նաև ուսուցման ու վերահսկողության համակարգ, որի խնդիրը օրինական իշխանությանը ենթարկվելն է, ինքնավերահսկողությունը և այնպիսի վարքագիծ ապահովելը, որը համապատասխանում է գոյություն ունեցող կար-

գերին: Անհրաժեշտ է յուրաքանչյուր զինվորի գիտակցությունը հասանելի դարձնել, թե որն է կարգապահության նշանակությունն ու անհրաժեշտությունը: «Կարգապահության գլխավոր նշանակությունը անհատների խումբը կազմակերպված կոլեկտիվ դարձնելն է, որը գործում է որպես մեկ միասնություն, ուղղված է միասնական նպատակի նվաճմանը և ենթարկվում է միասնական կամքի» [5, 167]: Սովորաբար զինվորները հաշվի չեն առնում անկարգապահության վտանգավորությունը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե կարգապահության բացակայությունը ձեռնտու է զինվորին: Սակայն դա միայն առաջին հայացքից: Կարգապահության բացակայության վտանգավորությունը նրանց պետք է բացատրվի զինված ուժեր մտնելուց անմիջապես հետո: Նրանք չեն հակադրվի կարգապահությանը, եթե գիտակցեն դրա նշանակությունն ու կարևոր լինելը: Երբ իմանան և տեսնեն այն տխուր հետևանքները, որին կարող է հանգեցնել կարգապահության բացակայությունը [2]: Կարգապահության ամրապնդումն ունի իր յուրահատկությունները՝ կախված կոնկրետ զինծառայողի մտավոր զարգացման մակարդակից, հարմարվողականությունից, ռիսկի դիմելու աստիճանից, դաստիարակությունից և ընտանիքից, թե այնտեղ ինչ նորմեր և արժեքներ են սերմանել զինծառայողին: Հարկավոր է հաշվի առնել այն փաստը, որ մտավոր բարձր մակարդակի տեր անձանց ազդեցության ենթարկելն ավելի դժվար է լինում: Ժամանակակից պայմաններում ժողովրդի և զինծառայողների հոգեբանությունը կտրուկ փոխվել է: Զինվորներն արդեն քննադատորեն են նայում իրենց վերադասին, հրամանատարին, նրանք արդեն իրենց հրամանատարին կուրորեն չեն ենթարկվում, որին նպաստում է նաև սոցիումը, մարդիկ, ովքեր բացասական կարծիք են հայտնում վերադասների մասին: Բանակային պայմանները պահանջում են սովորական վարքի ձևերի փոփոխություն: Նոր վարքի պահանջները նրանց մեջ բողոք ու դժգոհություն են առաջացնում, որն էլ երբեմն ոմանց մոտ նպաստում է վարքաձևի փոփոխության առաջացման: Նոր պայմանները լարվածության իրավիճակ են ստեղծում նորակոչիկների համար: Ներքուստ չհասկանալով և հաճախ չընդունելով այդ պահանջները, իսկ որոշ դեպքերում պարզապես չիմանալով՝ նրանք խախտումներ են թույլ տալիս: Առհասարակ, ամեն կերպ պետք է շեշտվի ռազմական առօրյայի խիստ կանոնակարգվածությունը, հակիրճությունը, խոսքի կառուցման, գործողությունների իրականացման առաջին հայացքից ձևական թվացող պաշտոնական ոճը: Այդ կերպ զինծառայողի մեջ ձևավորվում է և՛ կարգապահություն, և՛ ընդհանուրին պատկանելու զգացողություն, հատկապես համատեղ գործողությունների կատարման ժամանակ: Թե ենթակայության կարգը, թե զինվորական պատվի կարգը, կազմում են զինվորական կարգապահության հիմնաքարերից մեկը: Ավելին, դրանց խախտման համար նախատեսվում են ոչ միայն կարգապահական կանո-

նադրությունով սահմանված տույժեր և պատիժներ, այլև քրեական պատասխանատվություն [4, 77]:

Զինծառայության պայմանները լիովին տարբերվելով առօրյա կյանքից, բարդ ու անհասկանալի են քանի դեռ զինծառայողը չի հարմարվել այդ պայմաններին և չի ընտելացել միջավայրին, տեղանքին: Կախված թե որքան հեռավորության վրա է գտնվում նորակոչիկը, ինչ պայմաններ էր պատկերացնում և ինչ պայմանների է հանդիպում զորամասում, դա միանշանակ իր կարևոր դերն է ունենում զինծառայողի հետագա կարգապահ կամ անկարգապահ լինելու հարցում: Զինվորականության շրջանում յուրաքանչյուր դեպք անվանվում է կարգապահության խախտում կամ հանցանք, իսկ հոգեբանները դա համարում են վարքի փոփոխություն: Կարգապահ զորքերը հարձակման ժամանակ մեծ եռանդ են դրսևորում: Կարգապահությունը զորքերի բարոյական վիճակի հիմքն է: Առավել կայուն կարգապահություն ապահովվում է հետևյալ պայմանների առկայության դեպքում, երբ ղեկավարը ճանաչում է իր ենթականերից յուրաքանչյուրին, յուրաքանչյուր ենթակա ճանաչում է իր ղեկավարին, ղեկավարը միշտ համերաշխ է կոլեկտիվի հետ, խումբն ամբողջությամբ, ոգևորված էր ղեկավարի խանդավառվածությամբ, համախմբված է որպես կոլեկտիվ, խումբը համակված է ընկերության վեհ գաղափարով, կոլեկտիվը լավ մարզված է, եռանդուն է և նախաձեռնող: Թվարկված պայմանները ստեղծելու դեպքում /իսկ դա բոլոր հանգամանքներում լիովին հնարավոր է/ հանցագործություններ այլևս չեն կատարվի, ուսուցումն արագ առաջ կընթանա, զինվորները մարտունակ կդառնան, իսկ կարգազանցների զորամասն էլ պահանջարկը կթուլացնի:

Կարգապահություն ներդնելիս լավագույն արդյունքներ տալիս են ոչ թե ճնշման, այլ արտահայտչական միջոցները: Երբ փորձում են կարգապահություն ապահովել միայն ճնշումների օգնությամբ, ապա զինվորները դառնում են ծույլ և այլևս ինչպես հարկն է չեն հակազդում կալանքին կամ պատժի մյուս ձևերին: Նրանք կորցնում են իրենց նախաձեռնողականությունն ու անկեղծությունը: Երբ հիմնականում ճնշումներ են գործադրվում, ապա անհրաժեշտ է դառնում մշտական հսկողություն սահմանել զինվորների վրա: Մարտական հզոր ուժ դառնալու համար բանակը պետք է վերին աստիճանի կարգապահ լինի: Իսկ զորամասի կարգապահությունը ձևավորվում է առանձին զինվորների կարգապահությունից: Զինվորների կարգապահությունը ձեռք է բերվում նրանով, որ սխալ գործողությունների համար նրանց պատժում են, այլ նրանց վրա այնպիսի ազդեցություն գործելով, որպեսզի նրանք ճիշտ գործելու ցանկություն ունենան: Եթե զինվորին կրկին ու կրկին այնպիսի հրամաններ են տալիս, որոնք նա ի վիճակի չէ կատարել, ապա շուտով նա սկսում է չկատարել նաև ավելի հեշտ հանձնարարությունները: Սկզբում զինվորին հարկավոր է հատկացնել ժամանակ հարմարվելու այդ միջավայրին և նպաստել արագ ադապտացիային, ապա անհրա-

ժեշտ է ամենայն մանրամասնությամբ սովորեցնել, թե ինչ պետք է անի զինծառայողը, և հետո միայն հրամաններ տալ: Պետք է ի նկատի ունենալ նաև այն, որ կան ոչ միայն արագ, այլև ավելի դանդաղ հարմարվող, սովորող զինվորներ, ում հետ հարկավոր կլինի ավելի շատ աշխատանք տանել, կրկին ու կրկին բացատրել, թե ինչ են կատարելու: Յուրաքանչյուր նոր հնար իր բոլոր բաղադրիչների հետ միասին անհրաժեշտ է սովորեցնել ամենայն մանրամասնությամբ: Եթե զորամասում շատ են կարգապահական լուրջ խախտումները, ապա վստահորեն կարելի է ասել, որ ժամանակին չեն կասեցվել այնպիսի մանր խախտումներ, ինչպիսիք են համազգեստը կրելու հարցում անփութությունը, ճշտապահության բացակայությունը և այլն: Կարգապահական պրակտիկայի կանոններից է «Հոգ տարեք մանրուքների մասին, և այդ դեպքում ավելի մեծ խնդիրներում բարդություններ չեք ունենա»: Եթե առօրյա կյանքում մենք անընդհատ օգտագործում ենք պատիժ բառը, ապա զինվորականության ոլորտից անդրադառնալիս ճիշտ կլինի այն վերափոխել կարգապահական տույժի, քանի որ զինծառայության պայմաններում տույժը տրվում է միայն այդ կարգազանց վարքը, արարքը այլևս չկրկնելու և ՀՀ ԶՈՒ նորմերին ենթարկվելու նպատակով: Կարգապահական տույժի ենթարկելու որոշում կայացնելուց առաջ անհրաժեշտ է յուրաքանչյուր զանցանքի, զինծառայության պայմաններում իրականացրած անկարգապահության կամ անթույլատրելի արարքի, վարքի առնչությամբ անցկացնել բազմակողմանի և օբյեկտիվ ծառայողական քննություն և դրա արդյունքների հիման վրա որոշում ընդունել և զինծառայողին ենթարկել ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնադրությամբ նախատեսված համապատասխան տույժի: Առաջին զանցանքի դեպքում կարելի է սաստել և պատժել ներողամտորեն, կրկնվելիս՝ առավել խիստ, իսկ հետագա խախտումների դեպքում՝ առանց որևէ ներողամտության: Զինծառայության պայմաններում իրականացվող անկարգապահության յուրաքանչյուր տեսակ կարգապահական իր հատուկ տույժն ու դաստիարակչական մեթոդն ունի: Կարգապահական տույժը խստացվում է, եթե զանցանքը կատարվել է մարտական հերթապահության /ծառայության/ և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ, անսթափ վիճակում կամ դրա հետևանքով տեղի է ունեցել կարգուկանոնի էական խախտում [3]:

Վերը շարադրվածի հիման վրա, առաջ ենք քաշում այն վարկածը, որ որքան ճկուն հարմարվողականություն է դրսևորում զինծառայողը ծառայության ժամանակահատվածում, այնքան հաջող է իրականացնում ծառայությանը ներկայացվող պահանջներն ու կարգը: Հետազոտական աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՊՆ Ն զորամասում թվով 200 ժամկետային զինծառայողների հետ: Հիմնախնդիրը ուսումնասիրելու և հետազոտելու համար անցկացվել են փորձարարական ախտորոշման համապատասխան թեստավորման մեթոդ՝ Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապ-

տացիայի ախտորոշման մեթոդիկա, ինչպես նաև, հոգեբանական զրույց, դիտում և առանձին դեպքի ուսումնասիրում [1, 66]: Զինվորների հետ անցկացրած հետազոտական աշխատանքը ցույց տվեց, որ հետազոտված զինծառայողներից առավել կարգապահ վարք են ցուցաբերում հարմարված զինծառայողները, ովքեր վեց ամիս ավելի է ինչ ծառայում են, քան նորակոչիկները, ովքեր դեռևս լիովին հարմարված չեն զինծառայության պայմաններին: Ըստ մեր հետազոտության պարզ դարձավ, որ նորակոչիկներից 70%-ը դեզադապտացված է, և միայն 30 % է ադապտացված: Այս հետազոտությունն անցկացնելով 6 ամիս և ավելի ծառայող զինվորների հետ ստացանք հետևյալ համեմատական պատկերը՝ 74 % ադապտացված, 26 % դեզադապտացված, որից հանգում ենք այն փաստին, որ ավելի լավ են հարմարված 6 ամիս և ավել ծառայած զինծառայողները համեմատած նորակոչիկների, ովքեր դեռևս գտնվում են համանման հասնելու շրջանում: Այս տվյալներից կարող ենք եզրակացնել նաև, որ կախված զինծառայողի համարումից փոփոխվում է նաև վարքը. որքան հարմարված է զինծառայողը, այնքան կարգապահական խախտումներ թույլ չի տալիս զինծառայության պայմաններում (տես՝ նկար 1):



Նկար 1. Նորակոչիկ և 6 ամսից ավել ծառայության մեջ գտնվող զինծառայողների հարմարման համեմատական ցուցանիշներ

Համեմատելով ստացված արդյունքները և վերլուծելով առանձին դեպքերի ուսումնասիրման մեթոդի վերլուծությունը կարող ենք եզրակացնել, որ նորակոչիկների անկարգապահությունը ուղղակի ձևով կապված է նրանց դեզադապտացիայի հետ: Հետազոտության այս արդյունքներից ելնելով, կարող ենք առաջարկել հետևյալը. սպայական կազմը, զորամասի հոգեբանի

աջակցությամբ առավել ուշադրություն դարձնեն նորակոչիկների վարքին, նպաստեն նորակոչիկների արագ հարմարմանը և նրանց բավականաչափ ինֆորմացիա տրամադրեն զինծառայության պայմանների և կանոնակարգի մասին: Այն զինծառայողները, ովքեր հարմարված են զինծառայության պայմաններին և այնտեղ տիրող կանոնակարգին, սակայն, այնուամենայնիվ, անկարգապահություն են դրսևորում, առաջ է գալիս այլ հիմնախնդիր, որին այս աշխատանքում չենք անդրադարձել, բայց հետագայում այն ուսումնասիրության կառնենք:

Գրականություն

1. **Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ.** Կիրառական հոգեբանության պրակտիկում, հրատ., Եր. «Զանգակ-97», 2002, 391 էջ:
2. ՀՀ ՊՆ, Բարոյահոգեբանական ապահովում, Եր. 2015, 128 էջ:
3. ՀՀ ՊՆ «Հայրենիքի մարտիկ», Եր.2, 2003, 32 էջ:
4. **Аветисян С. С.** Воинские преступления: теория и практика /отв. А. Хачатрян.- Ер.: Зангак-97, 2000.- 216 с.
5. Военный энциклопедический словарь, том 1., М. Изд. РИПОЛ КЛАССИК, 2001- 848 с.

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Նադոյան Ա. Ա. (Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան)
Մինասյան Գ. Հ. (Հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան)

Հոդվածում ներկայացված է ՀՀ ԶՈՒ-ի կողմից զինծառայողին առաջադրված կարգապահական պահանջների հոգեբանական առանձնահատկությունները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել զինվորական կարգապահությունը, անկարգապահության դրդող պատճառահետևանքային կապերը, ինչպես նաև կարգապահության խաթարման հետևանքները: Մեր կողմից ծրագրված շարունակական հետազոտության շրջանում առաջադրված խնդիրներից են՝ ուսումնասիրել հետազոտվող զինծառայողների կարգապահության և անկարգապահության դրսևորման բնորոշ գծերը, դրանց արտահայտման ձևերը, պատճառներն ու հետևանքները: Հետազոտական աշխատանքներն իրականցվել են 200 զինծառայողի շրջանում: Անցկացվել են փորձարարական ախտորոշման համապատասխան մեթոդներ՝ թեստավորման մեթոդ, հոգեբանական զրույց, դիտում և առանձին դեպքի ուսումնասիրում (case study):

Հանգուցային բառեր՝ *զինծառայող, նորակոչիկ, կարգապահություն, կարգապահական կոյժ, խրախուսանք, հարմարում:*

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ДИСЦИПЛИНЫ И АДАПТАЦИИ ВОЕННОСЛУЖАЩЕГО

Надоян А.А. (Ереванский государственный университет, Ереван, Армения)
Минасян Г. Г. (Армянский государственный педагогический университет, Ереван, Армения)

Актуальность исследования основана на все более нарастающем требовании государства и гражданского общества к вопросам дисциплины в действующей армии. В статье представлены психологические особенности дисциплинарных требований, предъявляемых военнослужащим в ВС РА. Дисциплина в армии основана на требованиях законов и уставов, а также на неукоснительном выполнении всех приказов командного состава. Целью работы является исследование психологических аспектов армейской дисциплины, причинно-следственные особенности, толкающие на ее нарушение. В рамках запланированного нами лонгитюдного исследования основными задачами являются: ознакомление и изучение существующих в специальной литературе материалов относительно предмета нашего исследования, анализ основных характерных черт военнослужащего дисциплинированного и недисциплинированного, а также выделение наиболее частых способов проявлений недисциплинированности, причин и последствий таковых. Гипотеза работы следующая: чем больше проявлений гибкости, приспосабливаемости в поведении военнослужащего - тем легче исполнение, предъявляемых к военнослужащему требований. В исследовании участвовало 200 военнослужащих. В процессе исследования применялись методы психологической диагностики: тестирование, беседа с психологом и case study.

Ключевые слова: *военнослужащий, призывник, дисциплина, дисциплинарное взыскание, поощрение, адаптация.*